| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 1 | Եթե *մանրակաղապար* բառից հանենք անիվը, *խոշոր* բառի հականիշը, ապա՝ ամենակարևոր համեմունքը, կստանանք՝<br><br>*Ա*. քարային հանքատեսակ<br>*Բ*. մարդկանց խումբ<br>*Գ*. թռչունի տեսակ<br>*Դ*. անհերքելի փաստ<br>*Ե*. անկառավարելի իրադրություն | Ա | քարային հանքատեսակ |
| 2 | Աստվածուհիներից մեկը «հյուր» է: Ո՞վ է նա:<br><br>*Ա*. Նանե<br>*Բ*. Աստղիկ<br>*Գ*. Ծովինար<br>*Դ*. Արտեմիս<br>*Ե*. Անահիտ | Դ | Արտեմիս |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 3 | Բառաշարքի  բառերը, բացի մեկից, միավորում է մի հետաքրքիր օրինաչափություն: Ո՞ր բառն է զուրկ այդ օրինաչափությունից:<br><br>*ծանոթ, խնձոր, կապար, հանուն, խոշոր*<br><br>*Ա.* ծանոթ<br>*Բ.* խնձոր<br>*Գ.* կապար<br>*Դ.* հանուն<br>*Ե.* խոշոր | Դ | հանուն |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 4 | Ի՞նչ տառազույգ պետք է գրել մեղվիկի փոխարեն:<br><br>ԺԱ, ԻԲ, ԼԳ, , ԿՁ<br><br>*Ա.* ԱԸ<br>*Բ.* ԲՁ<br>*Գ.* ԸԸ<br>*Դ.* ԽԴ<br>*Ե.* ԳՁ | Դ | ԽԴ |
| 5 | Ի՞նչ տառեր պետք է դրվեն աստղանիշի փոխարեն, որ ստացվեն իմաստ պարունակող արտահայտություններ:<br><br>*հողի բե*հություն, ծնուն* շնորհավոր, փաստաթղթի պատճե**<br><br>*Ա.* րր, դտ, ն<br>*Բ.* ր, դդ, ն<br>*Գ.* րր, դդ, ոչ մի տառ<br>*Դ.* րր, դտ, ոչ մի տառ<br>*Ե.* րր, դդ, ն | Ե | րր, դդ, ն |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 6 | *Ն, Շ* և *ՈՒ* տառերով հնարավոր է կազմել երեքտառանի երկու բառ՝ *շուն, նուշ*: Ամենաշատը քանի՞ երեքտառանի բառ է հնարավոր կազմել *Ա, Ղ* և *Տ* տառերով:<br><br>*Ա.* 1<br>*Բ.* 2<br>*Գ.* 3<br>*Դ.* 4<br>*Ե.* 5 | Դ | 4 |
| 7 | Ո՞ր նախադասության մեջ է որոշակի օրինաչափությամբ թաքնվել այն անոթը, որի մեջ եկեղեցում պահվում է Հաղորդության գինին:<br><br>*Ա.* Սուրը վստահ դրեց պատյանը:<br>*Բ.* Սերը հաղթահարում է ամեն դժվարություն:<br>*Գ.* Սա կատարվեց իմ հարկում:<br>*Դ.* Սլաքը ցույց է տալիս ճիշտ ժամը:<br>*Ե.* Սարը հեռվից փոքր է երևում: | Գ | Սա կատարվեց իմ հարկում: |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 8 | Ի՞նչ բառակապակցություն է գաղտնագրվել նկարելուկով:<br><br>2,1,2,3,4,5,6,7,1,2,1,2,3,4,6,7,8,2,1<br><br>Ա. անպատասխանատու մարդիկ<br>Բ. պատահական պատասխանող<br>Գ. նպատակահարմար պայման<br>Դ. անապաստան անապատական<br>Ե. նապաստակի թվաբանություն | Դ | անապաստան անապատական |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 9 | *— Աչքս տեսածից է վախենում. նախքան նրա մոտ գնալը արի գլուխ գլխի տանք, որ հոնքը շինելու փոխարեն աչքն էլ չհանենք: — Ես դրան հինգ մատիս պես գիտեմ. նա ձեռքերը ծալած չի նստի, պիտի ձուկը գլխից բռնենք:*<br><br>Քանի՞ դարձվածք կա բերված երկխոսության մեջ:<br><br>*Ա.* 1<br>*Բ.* 3<br>*Գ.* 4<br>*Դ.* 5<br>*Ե.* 6 | Ե | 6 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 10 | *Ա* տառը, միանալով տրված տառախմբերին, կազմում է բառ՝ բացի մեկից: Ո՞ր տառախմբի հետ *ա* տառը բառ չի կազմում:<br><br>*Ա.* ճրպ<br>*Բ.* ճրզ<br>*Գ.* ճնկ<br>*Դ.* ճնճ<br>*Ե.* ճժկ | Ե | ճժկ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 11 | Ի՞նչ բառ է գաղտնագրվել ստորև բերված կառույցով.<br><br>*լեռ + 100 տարի + շեն*<br><br>*Ա.* Սարդարապատ<br>*Բ.* Լեռնահովիտ<br>*Գ*. Լեռնագոգ<br>*Դ.* Լեռնալանջ<br>*Ե*. Սարսաղաշեն | Ա | Սարդարապատ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 12 | Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է  մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում  են նույն թվանշանները: Պատասխանի տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:<br><br>ՇՈՒՆ + ԿԱՏՈՒ = ՄԱՐՏ<br><br>Ա. 936 + 6083 = 7019<br>Բ. 934 + 6084 = 7018<br>Գ. 825 + 9028 = 9853<br>Դ. 935 + 6083 = 7018<br>Ե. 934 + 6083 = 7017 | Դ | 935 + 6083 = 7018 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 13 | Պատասխանի տարբերակների բառազույգերից ո՞րը պետք է գրել մեղվիկների փոխարեն։<br><br>Ա. լոր, շոր<br>Բ. լար, շաղ<br>Գ. շոգ, շաղ<br>Դ. կոր, կաղ<br>Ե. հոր, հող | Գ | շոգ, շաղ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 14 | Պատասխանի տարբերակներից ո՞րն է համապատասխանում բերված գծապատկերին։<br><br>փակ վանկ – բաց վանկ – բաց վանկ – բաց վանկ – բաց վանկ – բաց վանկ – բաց վանկ – փակ վանկ<br><br>*Ա.* փիլիսոփայություն<br>*Բ.* լեզվափիլիսոփայություն<br>*Գ.* հոգելեզվաբանություն<br>*Դ.* տրամաբանություն<br>*Ե.* իրավագիտություն | Բ | լեզվափիլիսոփայություն |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 15 | Մարիամը համակարգչով մուտքագրել էր ***բաժակ, դեղձան, քամոտ, դատավոր, խոյանալ*** բառերը: Կատակասեր Գևորգն այդ բառերի մի տառը որոշակի օրինաչափությամբ փոխարինեց մեկ այլ միևնույն տառով: Ո՞ր տառի «շնորհիվ» Գևորգը նոր շունչ հաղորդեց Մարիամի բառերին:<br><br>*Ա.* ի<br>*Բ.* ն<br>*Գ.* յ<br>*Դ.* ր<br>*Ե.* ու | Դ | ր |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 16 | Պատասխանի տարբերակները, բացի մեկից, նույն ընտանիքից են: Ո՞րն է օտարը:<br><br>*Ա.* սֆինքս<br>*Բ.* ամբարտակ<br>*Գ.* զուռնա<br>*Դ.* կակաղու<br>*Ե.* աղվես | Բ | ամբարտակ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 17 | Ի՞նչ բառ է գաղտնագրվել նկարելուկով:<br><br>*Ա.* ծածկոց<br>*Բ.* կծկում<br>*Գ.* ծծակ<br>*Դ.* ծակծկում<br>*Ե.* ծակում | Դ | ծակծկում |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 18 | *Վերջակետ, բութ, սուր, ստորակետ, ապաթարց, պարույր, պարույկ, շեշտ, ենթակա, ենթամնա, միջակետ* բառերի մեծ մասին միավորում է ընդհանուր հասկացությունը: Բառերից քանի՞ն չի վերաբերում այդ հասկացությանը:<br><br>*Ա.* 3<br>*Բ.* 4<br>*Գ.* 5<br>*Դ.* 6<br>*Ե.* 7 | Ա | 3 |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 19 | *Այս անունով՝ Էնենա,*<br>*Թաքցրել եմ ես նրան,*<br>*Թե վանկերով դու կարդաս,*<br>*Պատասխանը կստանաս:*<br><br>*Ա. այս* դերանունը<br>*Բ. Է* տառը<br>*Գ. Եղենա* անունը<br>*Դ. նավ* բառը<br>*Ե. Աննա* անունը | Բ | Է տառը |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 20 | *Այդ բառի մեջ հում է Ք-ն.*<br>*Չի էլ եփվի՝ տա՛ռ է Ք-ն:*<br><br>*Ա.* հոնք<br>*Բ.* հումակեր<br>*Գ.* քահանա<br>*Դ.* հումք<br>*Ե.* աղքատ | Դ | հումք |
| 21 | Բառերի վանկերը շուռ են եկել և հեռացել միմյանցից: Ո՞ր տարբերակը չի վերականգնվի:<br><br>Ա. րըկ-լեթ<br>Բ. րըկ-պակ<br>Գ. րըկ-տաճ<br>Դ. րըկ-նիկ<br>Ե. րըկ-սեկ | Բ | |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 22 | Խաչբառի նարնջագույն վանդակներում միևնույն ձայնավոր հնչյունը տեղադրելուց հետո մեղվիկի փոխարեն ո՞ր տառը պիտի ընտրես, որ ուղղահայաց բոլոր սյունակներում բառեր ստացվեն:<br><br><br>*Ա.* ս<br>*Բ.* ձ<br>*Գ.* թ<br>*Դ.* վ<br>*Ե.* լ | Ա | ս |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 23 | *ԾՌԴՌԾՌՅՐՆՆՌՌՀՆՆՇՌ* տառաշարով գրված է՝<br><br>*Ա.* Ծառան ցորեն ու նուռ առավ, հետո նուշ առավ:<br>*Բ.* Ծառա դառած՝ առա ցորեն ու նուռ, առա հոն ու նուշ առա:<br>*Գ.* Ծառա, դառը նուշ մի առ, ցորեն ու նուռ առ:<br>*Դ.* Ծառան ծանր դուռը տարավ ու նուռ առավ:<br>*Ե.* Ծառաները դարձան դռան պահակներ: | Բ | Ծառա դառած՝ առա ցորեն ու նուռ, առա հոն ու նուշ առա: |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 24 | Ի՞նչ նախադասություն է գաղտնագրվել նկարելուկով:<br><br>*Ա.* Յոթակնանի տանն տվեցին կապիտանին:<br>*Բ.* Անիվների վրա կետեր կային:<br>*Գ.* Ակների վրա կար վեց տառ:<br>*Դ.* Շատակերին կեր տվեցին:<br>*Ե.* Կերակրատաշտը տվեցին, որ տանի: | Դ | Նկարելուկ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 25 | Կոտորակագիր կոչվող ծածկագրում մեր այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում է մի կոտորակ, որի համարիչում և հայտարարում դրված կետերը որոշակի կապ ունեն տվյալ տառի հետ: Օրինակ՝<br><br>Ի՞նչ առած է գաղտնագրվել հետևյալ կոտորակագրում.<br><br>*Ա.* Գլխին զարկեցին, ասաց՝ վա՜յ մեջքս:<br>*Բ.* Եզն աշխատի, ձին ուտի:<br>*Գ.* Մարդուն ընկերով կճանաչեն:<br>*Դ.* Ուշ լինի, նուշ լինի:<br>*Ե.* Ով աշխատի, նա կուտի: | Ե | Ով աշխատի, նա կուտի: |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 26 | Նկարելուկում գաղտնագրված է երկու բառ: Ո՞րն է այդ բառազույգը:<br><br>Ա. կոշիկ – սպունգ<br>Բ. կապար – սամիթ<br>Գ. կաշվե – սրինգ<br>Դ. երանգ – գավիթ<br>Ե. կրակե – սալիկ | Գ | կաշվե – սրինգ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 27 | ***Բաժանայուն, կաթնագին, գործասեղան, տարադրամ, կրծքավանդակ, նավահետք, ակնաշար*** բոլոր բառերը, բացի մեկից, օժտված են ածպարարական հատկությամբ: Ո՞ր բառն է զուրկ այդ հատկությունից:<br><br>*Ա.* բաժանայուն<br>*Բ.* գործասեղան<br>*Գ.* կրծքավանդակ<br>*Դ.* ակնաշար<br>*Ե.* տարադրամ | Գ | կրծքավանդակ |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 28 | Ամեն քայլում ավելացնելով մեկ տառ և մնացած տառերով կազմելով նոր բառ՝ լրացրու բառաստիճանը: Ավելացվող տառերի ո՞ր հերթականությամբ դա հաջողվեց:<br><br><br>*Ա.* կ, ա, ր, ո, տ<br>*Բ.* կ, ա, տ, ա, ր<br>*Գ.* ա, ո, ր, տ, ա<br>*Դ.* ր, ո, տ, կ, ո<br>*Ե.* կ, ա, ր, ա, տ, ե | Դ | ր, ո, տ, կ, ո |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 29 | Տառաշարքը կազմված է որոշակի օրինաչափությամբ: Ի՞նչ տառ պետք է գրել մեղվիկի փոխարեն:<br><br>Կ, ՈՒ, Ք, Ս, Գ, Ց, Թ, Թ,       , Ը <br><br>*Ա.* Թ<br>*Բ.* Ք<br>*Գ.* Ո<br>*Դ.* Ս<br>*Ե.* Ը | Ե | Ը |

| | Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով | Ճիշտ պատաս-խան | Ճիշտ պատասխան /բառերով/ |
|---|---|---|---|
| 30 | **Պարսպապատ, հաղորդիչ, աթոռակռիվ** բառերը մի տոհմածառի ճյուղերն են: Տարբերակներից ո՞րը կլինի ևս մեկ ճյուղ:<br><br>*Ա.* հակինթ<br>*Բ.* համադամ<br>*Գ.* գերեվարում<br>*Դ.* նոյեմբեր<br>*Ե.* կայծոռիկ | Ե | կայծոռիկ |